บทกวี

2'2006

Վանիկ ՎԻՐԱԲՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ (1918-1920 ԹԹ.)

Հաղթահարելով զգալի ֆինանսական, տեխնիկական-տնտեսական և կազմակերպչական-կադրային դժվարություններ, Հայաստանի առաջին հանրապետությունը 1918-1920 թթ. ձգտում էր հնարավորինս արդյունավետորեն լուծել հանրապետության անվտանգության ապահովման խնդիրները, ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն Անդրկովկասում և նրա շուրջ աշխարհաքաղաքական ուժերի դասավորվածության, ինչպես նաև Թուրքիայի կողմից ձեռնարկվող ռազմաքաղաքական պատրաստությունների, սադրանքների ու մեքենայությունների մասին:

Ակներև է սակայն, որ հետախուզական ծառայությունները մասնավորապես 1920 թ. աշնանը բռնկված թուրք-հայկական պատերազմի նախօրյակին համեմատաբար աղոտ պատկերացումներ ունեին թուրքական բանակի թե թվաքանակի, թե պլանների և թե առհասարակ շատ հարցերի վերաբերյալ: Արդյունքը եղավ այն, որ չկարողացան պատնեշվել թուրքական զավթողական պլաններից, արդյունավետորեն հակազդել Ք. Կարաբեքիրի բանակի հետախուզական մարմինների գործունեությանը: Այդ փաստը հաստատվում է թեկուզ նրանով, որ տարբեր հեղինակներ հակասական տվյալներ են բերում այդ ժամանակաշրջանի մասին, մասնավորապես թուրքական բանակի թե իրական կազմի և թե թվաքանակի մասին: «Տաճիկները լուռ ու անաղմուկ պատրաստվում էին Հայաստանի վրա արշավելու: Հայկական կառավարությունը շատ ուշ իմացավ նրանց այդ դիտավորության մասին»,- գրում է ժամանակակիցը՝ Յ. Իրազեկը[1]: Մեկ այլ ժամանակակից՝ Կ. Սասունին, ևս անդրադառնալով այդ հարցին, գրում է, որ երբ թուրքական բանակը Հայաստանի սահմանների վրա, Նախիջևանի և Կարսի նահանգներում նախապատրաստություններ էր տեսնում և ուներ ճյուղավորված լրտեսական ցանց, որի միջոցով ստանում էր անհրաժեշտ և տեղին տեղեկատվություն, ապա հայկական բանակի թիկունքն այդ ժամանակ անապահով վիճակի մեջ էր. «Մենք զուրկ կը մնայինք շարք մը ճշգրիտ տեղեկութիւններէ, որոնց չգոյութեան պատճառով՝ բավական վնասներ կրեցինք»[2]: Այս հեղինակների հետ համերաշխվում է նաև մեկ այլ ժամանակակից՝ Վ. Արծրունին, գտնելով, որ հայկական հետախուզությունը մասնագիտորեն թույլ էր, և նրա կողմից կատարված աշխատանքներն անբավարար էին[3]:

Բայց, իհարկե, չի կարելի իրադարձությունների ժամանակակցի կողմից արտահայտված ամեն մի միտք միանշանակ ընդունել, քանզի վերջիններս հանդիսանալով այդ դեպքերի անմիջական մասնակիցները (այդ թվում նաև Վ. Արծ-

րունին և այլք), հոգեբանորեն փորձելով ազատվել որոշակի բարդույթներից, անհաջողությունների իրական պատճառահետևանքային կապերը որոնում են այլ տեղ և այլ չափումների մեջ, մի բան, որ անբավարար է խորքային և ճշգրիտ եզրակացությունների հանգելու տեսանկյունից: Այդուհանդերձ, նրանց կողմից արտահայտված տեսակետներում կան նրբերանգներ, որոնք օգտակար են և մեզ ինչ-ինչ բաներ հուշում են: Այսպես, Վ. Արծրունին գրում է. «Մեր երկրի de facto ճանաչումը յառաջ բերաւ մասսայական հոգեկան արբեցում... բիւրոկառավարութիւնը, ամբողջապէս տարուած ներքին մաքրագործումի եւ մեր սահմանները մեր իսկ ուժերով ուղղելու ինքնավստահ խանդավառութիւնէն, անկարող էր կշռել ահաւորութիւնը ստեղծուած վիճակին: ...Շնորհիւ այս դժբախտ հանգամանքին տաճիկները հնարաւորութիւն ունեցան հանդարտ եւ աննկատ ինքզինքնին կազմ ու պատրաստ վիճակի մէջ դնելէ յետոյ միայն պարզել իրենց վերջնական մտադրութիւնը»[4]:

Որոշ փաստաթղթերի, ռազմահետախուզական ամփոփագրերի մանրազնին վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ չնայած հետախուզական ծառայությունների հաղորդած տեղեկատվության որոշակի հակասականությանը և աղոտությանը, Հայաստանի քաղաքական և կուսակցական ղեկավար շրջանները հարկ եղած ուշադրությամբ չէին վերաբերվում ստացված տեղեկատվությանը, երբեմն էլ նույնիսկ այն դնում էին դազգահի մամլիչի տակ և ավելի շուտ կողմնորոշվում էին աշխարհաքաղաքական կոնյունկտուրայի թելադրանքով: Այս իրողությունը հաստատում է Ալ. Խատիսյանը. «Առաջին տեղեկութիւնները պատրաստուող յարձակման մասին հայկական կառավարութեան խուզարկու մարմինները սկսան ստանալ Օգոստոսին: Անոնք այս տեղեկութիւնները հաղորդեցին Դաշնակիցներու ներկայացուցիչներուն՝ պատրաստուող դէպքերը կանխելու նպատակով: Այս տեղեկութիւնները հասան մինչեւ Փարիզ, բայց անոնց առանձին նշանակութիւն չտրուեցաւ»[5]: Այս առումով մի շարք փաստաթղթեր իրենց վրա ուշադրություն են հրավիրում, պահանջելով վերաիմաստավորել և վերագնահատել պատմական անցյալի քաղաքական իրողությունները, դեպքերն ու զանազան անցքերը: Դրանցից ակնհայտ է դառնում, որ հայկական հետախուզությունը որոշակի ջանքեր գործադրում էր քիչ թե շատ արժեքավոր տեղեկատվություն ձեռք բերելու համար, այն ծառայեցնելով Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգության շահերի ապահովմանը: Այսպես, Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքը իր հնարավորությունների շրջանակներում տեղեկություններ է հայթայթել և՛ 1919 թվականին, երբ արդեն կարծես թե կազմակերպվել էր նրա տարբեր օղակների աշխատանքը, և՛ 1920 թվականին, որը բարենպաստ էր նրա գործունեության համար՝ ընդհուպ մինչև 1920 թ. Սևրյան օգոստոսյան խանդավառության օրերը, և՛ կազմալուծիչ 1920 թ. երկրորդ կեսին, և՛ մասնավորապես աշնանը, երբ բռնկվեց թուրք-հայկական պատերազմը, երբ Անտանտի դաշնակից երկրները մեկը մյուսի ետևից լքեցին Անդրկովկասը, տեղը զիջելով տարբեր բևեռներից մոտեցող քեմալականներին և բոլշևիկներին, որոնք էլ Հայաստանը բաժանեցին ազդեցության ոլորտների: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ բոլշևիզմը Ռուսաստանում, որպես ռազմաքաղաքական և հասարակական հոսանք, ամրապնդման գործընթաց էր ապրում, գնում էր դեպի կայունացում: Այդ ընթացքը հստակ ըմբռնելի չէր, ինչի հետևանքով հայկական դիվանագիտական-քաղաքական շրջանները հենվում էին Վրանգելի, Կոլչակի, Դենիկինի և այլոց վրա՝ բացարձակապես չկռահելով, թե իրադարձությունների ու դեպքերի սրընթաց այլափոխությունները և զարգացումները ինչպիսի աղետաբեր աշխարհաքաղաքական դրություն են ստեղծելու առաջին հերթին հենց Հայաստանի Հանրապետության համար: Հայաստանի քաղաքական-կուսակցական ղեկավար շրջանները լուրջ չէին ընդունում բոլշևիկյան-քեմալական մերձեցումը և դաշինքը, հետևաբար և չէին հավատում դրա կենսունակությանը, համոզված էին, որ վաղ թե ուշ Անտանտի երկրների համախումբը վերջ է

դնելու թուրքական կայսրության գոյությանը, որի շնորհիվ էլ հնարավոր կդառնա Հայկական հիմնահարցի լուծումը՝ միասնական և մեծ հայկական պետության ստեղծումը: Հենց այդ չարաբաստիկ հանգամանքն էլ իր կնիքը դրեց Հայաստանի Հանրապետության կառավարության բոլոր գործողությունների վրա, որոնք չէին բխում ժամանակաշրջանի ոգուց և չէին համապատասխանում փոփոխված աշխարհաքաղաքական իրավիճակին: Շատերը չէին ըմբռնում, որ ժամանակավոր շահերը հարկադրում էին պատմականորեն իրար թշնամի երկու պետություններին՝ Վ. Ի. Լենինի Ռուսաստանին և Մ. Քեմալի Թուրքիային «եղբայրական» ձեռք մեկնելու իրար և մի ճակատ կազմելու ընդդեմ ընդհանուր թշնամու՝ «դրամատիրական» Եվրոպայի:

Ստեղծված բարդ իրադրությունում հայկական հետախուզական ծառայությունը փորձում էր ոչ միայն սեփական ոտքերի վրա կանգնել, այլև հնարավորինս արդյունավետ հակազդել թուրքական մեքենայություններին Հայաստանի երիտասարդ հանրապետության նկատմամբ, որի կուսակցական-քաղաքական առաջնորդների պատկերացումները և ընդհանուր մարտավարությունը գտնվում էին վերը նշված Սևրյան ոգորումների շրջանակներում: Այդուհանդերձ, 1919 թ. վերջին և 1920 թ. սկզբին հետախուզությունը աշխատում էր տեղեկատվություն հավաքելով Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի, բոլշևիկյան Ռուսաստանի և այլ երկրների մասին, որոշակի պատկերացումներ կազմելով վերջիններիս զորքերի թվաքանակի, տեղաբաշխման, զինվածության և այլնի մասին, ինչպես նաև վերջիններիս դեմ ձեռնարկելով որոշ հակամիջոցներ: Այսպես, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղված 1919 թ. մայիսի 24-ի գաղտնի գրությամբ (No 0084) Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Ալ. Շնեուրը և հետախուզական բաժնի պետի պաշտոնակատար Հովհան Խան-Կոտուրսկին հայտնում էին, որ Գլխավոր շտաբի կողմից շտապ Էրզրում, Մուշ, Վան և Թուրքահայաստանի մյուս քաղաքներն է գործուղվել շտաբս-կապիտան Տ. Դևոյանցը[6]: Ուղևորության վերջնական նպատակը Կ. Պոլիս հասնելն ու այնտեղ հետախուզական գործի կազմակերպումն էր: Կ. Պոլսում Տ. Դևոյանցը համագործակցելով մի շարք հետախույզների և մասնավորապես հետագայում Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրի աշխատակից Հ. Ղազարյանի հետ, որը այդ ժամանակ անգլիական զինվորական ծառայության մեջ էր գտնվում, սկսում է զանազան եղանակներով Հայաստան ուղարկել արժեքավոր տեղեկատվություն Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների ու տարածաշրջանային այլևայլ քաղաքական փոփոխությունների ու շրջադարձերի մասին[7]:

Հայկական հետախուզական ծառայության գործունեության քիչ թե շատ լիարժեք լուսաբանման տեսանկյունից կարևոր է նաև գեներալ-լեյտենանտ Հախվերդյանի 1919 թ. օգոստոսի 16-ի հեռագիրը (N 0414)՝ ուղղված Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության զինվորական կցորդ գեներալ-մայոր Հ. Քիշմիշյանին (Քիշմիշև): Դրա հիմքում ընկած է օգոստոսի 15-ի հետախուզական ամփոփագիրը, ուր նշվում էր, թե Ալաշկերտի հովտում տեղաբաշխվել են 3-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ և 36-րդ թուրքական դիվիզիաները, Տրապիզոնի շրջանում՝ 31-րդ դիվիզիան: Հեռագրում նաև հայտնվում էր, որ Էրզրումում նիստեր է գումարում «Շուրայի» խորհրդակցությունը, որին ներկա էին պատգամավորներ Ադրբեջանից, Վրաստանից, Լազիստանից և Աջարիայից, և ընդունված որոշման մեջ կարևոր տեղ է հատկացվել ողջ տղամարդ բնակչության զինմանը: Հեռագրում մասնավորապես կարևորվում էր այն հանգամանքը, որ կոնֆերանսի կողմից ընդունված կոչում մուսուլմաններին սրբազան պատերազմի էին կոչում, հրահանգ տալով 6 վիլայեթները պաշտպանել «հայերի ոտնձգություններից», հաշվի չնստելով նույնիսկ Կ. Պոլսից եկած հրահանգների հետ, եթե նույնիսկ Դաշնակիցները իրականացնեին թուրքական տարածքների գրավում[8]:

1919 թ. նոյեմբերի 9-ի հետախուզական ամփոփագրում Գլխավոր շտաբի

հետախուզական բաժնի պետ կապիտան Վ. Մուրադյանը և նրա օգնական, պոդպորուչիկ Մ. Դոդոխյանը հաղորդում էին *ծովային մինիստր Սալիհ փաշայի հեռագրի մասին, որում «Միլլի» շարժման զինվորականներին խորհուրդ էր տրվում արտաքնապես ցույց տալ իրենց պատրաստակամությունը Անտանտի առաջ ցրելու ազգային զինված ուժերը, իսկ իրականում գաղտնապես չդադարեցնել զինված ուժերի ձևավորման գործընթացները, նախատեսելով բացահայտ հանդես գալ միայն այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը և պատեհ առիթը կլինի*[9]: Իհարկե, սրանք շատ ամբողջական տվյալներ չէին, պակասող օղակներ կային, սակայն եղածն էլ վկայում է այն մասին, որ հայկական հետախուզությունը փորձում էր լավ պատկերացումներ ունենալ թուրքական ուժերի մասին և իրապես հակազդել թշնամուն, ինչը տարբեր պատճառներով ոչ միշտ էր հաջողվում:

1919 թ. դեկտեմբերի 21-ին հետախուզությունը տեղեկացնում էր, որ չնայած թուրքական ազգային շրջանների ղեկավարների միջև առկա որոշ տարաձայնություններին, հենց ինքը Քյազիմ Կարաբեքիր փաշան և Ռաուֆ բեյը, հույսը դնելով Անտանտի «դաշնակից» երկրների անվճռականության վրա, ցանկանում են իսկույն ևեթ սեփական ուժերով գրավել մինչև Արփաչայ ընկած տարածքի հյուսիսային մասը, որպեսզի Փարիզի վեհաժողովին կանգնեցնեն կատարված փաստի առաջ՝ իրականացնելով Հայկական հարցի վերացումը: Որպես ապացույց հայկական սահմանին հարող տարածքներում թուրքական ուժերի աշխուժացման, զեկուցագրում նշվում էր հետախուզական տվյալներով հաստատվող թուրքական զորամասերի մանևրումների մասին, մասնավորապես 9-րդ թուրքական դիվիզիայի շարժը Օլթիի շրջանի ուղղությամբ, 11-րդ դիվիզիոնի գործողությունները Շարուր-Նախիջևանի և Զանգիբասարի շրջաններին հարող տարածքներում, և 3-րդ ու 12-րդ դիվիզիաների վերախմբավորումները Տրապիզոնի և Էրզրումի շրջաններում, որոնք հաստատվում էին նաև այլ աղբյուրներով[10]: Կապիտան Մուրադյանը եզրակացնում էր, որ անհրաժեշտ է իսկույնևեթ ամեն ինչի մասին տեղեկացնել Դաշնակիցներին՝ մտածելով, թե վերջիններս անտեղյակ էին անցուդարձից, քաղաքական գործընթացների իրական ընթացքից, որպեսզի նրանք ձեռնարկեին պատեհաժամ միջոցներ հայերի ֆիզիկական գոյության ապահովման համար[11]:

Ի դեպ, հարկ է ասել, որ Դաշնակիցների հնարավոր անտարբերության մասին Անտանտի գծով իրենց փոքր դաշնակցի՝ Հայաստանի նկատմամբ, և դրա հետ կապված Թուրքիայի կողմից ձեռնարկվող ագրեսիվ ու սադրիչ գործողությունների կապակցությամբ ուշագրավ տեսակետ է արտահայտում նաև Տ. Դևոյանցը՝ միաժամանակ ավելացնելով, որ Ռուսաստանի վրա էլ չեն կարող հույս դնել. *«Տաճիկ-թաթար պատրաստութիւնների մասին Հայաստանի կառավարութիւնը իրազեկ էր պահում մեր արտասահմանի պատուիրակութիւնը, որը զուր ծեծում էր եւրոպական դիւանագէտների դռները... Մեզ կարող էր փրկել միայն մեզ մօտ գտնուող ռուսը, եւ հայերից շատերը իրենց աչքերը յառել էին դէպի հիւսիս՝ Սովետների կողմը: Բայց նա հեռու էր մեզանից եւ զբաղուած իր ներքին քաղաքացիական կռիւներով, թէեւ հետզհետէ մօտենում էր Անդրկովկասին»*[12]:

Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի 1920 թ. հուլիսի 3-ի ամփոփագրում (թիվ 18) հաղորդվում էր, որ գործակալական տվյալների համաձայն թուրքերը Կոստանդնուպոլսում կազմակերպել են հետախուզական բյուրո, որի գործակալները պետք է աշխատեին Վրաստանի սահմաններում և հետևեին Հայաստանի իրադարձություններին: Հայտնվում էր, որ այդ նպատակով հավաքագրվել են հայերենին տիրապետող բազմաթիվ վրացիներ և ռուսներ, որոնք մոտ ժամանակներում պետք է ժամանեն Հայաստան: Բացի այդ, հետախուզական ամփոփագրում հատուկ շեշտվում էր, որ ստուգված տվյալների համաձայն Գերմանիայում տպագրվել է մեկ միլիոն կեղծ թուրքական լիրա, որ պետք է ուղարկվի Կովկաս: Այնուհետև ավելացվում էր, որ Ադրբեջանին օգնելու նպատակով այդ գումարը պետք է գլխավորապես ծախսվեր Հայաստանում՝ նպատակ հետապնդելով վերջնականապես գցել հայկական չեկերի կուրսը[13]:

1920 թ. հուլիսի 6-ի այս ամփոփագիրը փաստում էր, որ Հայաստանի սահմանների մոտ տեղաբաշխված է Քյազիմ Կարաբեքիր փաշայի 15-րդ թուրքական կորպուսը, ընդ որում նշելով, որ թուրքական ամեն մի դիվիզիա ուներ 1100-1500 սվին: Ուշագրավ է, որ հետախուզական ամփոփագրում ասվում էր, որ ասկյարները վատ են հագնված, սակայն զինված են շատ լավ: Այնուհետև շեշտվում էր, որ Տրապիզոնի և Էրզրումի միջակայքում նշմարվել են 31-րդ դիվիզիայի զորամասերը, որոնք շարժվելիս են եղել Բայազետի ուղղությամբ, ավելացնելով, որ 11-րդ և 18-րդ հետևակային դիվիզիաները և շտաբը գտնվում են Բայազետում, Վանում է գտնվում 32-րդ հետևակային գունդը, Բայազետ-Արչայում՝ 53-րդ հետևակային գունդը, և այլն[14]:

Չնայած իրենց որոշ կիսատպռատությանը, այս տեղեկությունները արժեքավոր էին, և հարկ եղած դեպքում, կարող էին զգաստացնել քաղաքական ու զինվորական առաջնորդներին, եթե նրանք իրավիճակի ողջ լրջությունը ամբողջովին և խորությամբ պատկերացնեին և ոչ թե ապավինեին սոսկ Անտանտի իրենց մեծ եղբայրներից ակնկալվող ռազմական և քաղաքական հնարավոր աջակցությանը:

Հետախուզական գործունեության հաջողությունները և սայթաքումները շատ դեպքերում պայմանավորված էին ոչ միայն նրանով, որ այդ հետախուզությունը կադրային-ֆինանսական առումով գտնվում էր ծանր վիճակում, այլև նրանով և, թերևս, առաջին հերթին նրանով, որ այդ ժամանակաշրջանի ռազմաքաղաքական այրերը կլանված լինելով 1919 թ. Փարիզում բացված մեծ տերությունների վեհաժողովով և այնուհետև 1920 թ. Սևրով ծնված խանդավառությամբ, որ վերջապես արդարությունը կհաղթանակի և ամեն ինչ իր տեղը կգտնի, գործնականում «բնականաբար» լուրջ չէին ընդունում նորելուկ հայկական հետախուզության գործունեությունը, չէին վստահում նրա կողմից մատուցված տեղեկատվությանը, նրանց պատրաստած փաստաթղթերին:

Անշուշտ, այդ տեղեկատվությունը չէր կարող լիարժեք լինել, դա ընդամենը կատարված աշխատանքի՝ հնարավորի արտացոլումն էր, որոշ տվյալներ ճշգրտման, հավելման կարիք ունեին, սակայն եղածն էլ բավական էր, որ լուրջ նախազգուշացում հանդիսանար նախապատրաստվող փոթորկալից իրադարձությունների նախօրյակին: Ինչևիցե, հարկ է եզրակացնել, որ հետախուզական տեղեկագրերը, ոչ միայն Թիֆլիսից ստացվող, գուցեև այլ աղբյուրներից, այդպես էլ իրենց նպատակին չհասան, և դրա մեջ ամենևին էլ միայն հետախուզական ծառայությունները չեն մեղավոր: Հետախուզությունը գուցե և ուներ իր մեղքի բաժինը, տվյալները հակասական էին, ոչ ամբողջական, երբեմն էլ ճշգրտման կարիք զգացող, բայց որ դրանք վկայում էին թուրքական զորքերի ռեալ տեղաշարժերի մասին, պետք էր դրանց ուշադրություն դարձնել, սակայն զգուշավորության բոլոր ազդանշանները խլացվեցին, ՀՀ առաջին վարչապետ Հովի. Քաջազնունու դիպուկ բնութագրմամբ. «Սեւրի դաշնագիրը շլացրել էր բոլորիս աչքերը, կաշկանդել միտքը, մթնացրել իրականութեան գիտակցութիւնը»[15]: Ասվածից ակնհայտ է դառնում, որ այդ տարիներին կուսակցական-քաղաքական շրջանները չընդունեցին կատարված և կատարվող փոփոխությունների խորքային իմաստները, չընկալեցին ու հաշվի չառան, որ Մեծ Բրիտանիայի ասպարեզից հեռանալուց հետո հենց Խորհրդային Ռուսաստանը և վերակենդանացող Թուրքիան էին այն երկու պետությունները, որ վճռորոշ դերակատարություն պիտի ունենային այդ տարածաշրջանում: Արդյունքում Հայաստանը չկարողացավ համաձայնության գալ այդ պետություններից որևէ մեկի հետ: Հայաստանի և Թուրքիայի միջև Սևրի դաշնագրի ուրվականը կար, իսկ Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև իրեն զգացնել էր տալիս Հայաստանի Հանրապետության խաբուսիկ հույսը՝ կապված մեծ դաշնակիցների

օժանդակության հետ, որոնք, ինչպես դիպուկ նկատում են անգլիացի հետազոտողներ, Կովկասի պատմության մասնագետներ Դեյվիդ Մարշալ Լանգը և Քրիստոֆեր Ջեյմս Ուոքրը, հայերին և հայ ժողովրդի քաղաքական լիդերներին հմտորեն կերակրում էին «Սև ծովից մինչև Միջերկրական ծով տարածվող Հայաստան ստեղծելու երազային գաղափարով[16]: Հանրապետության կառավարությունը հաշվի չառավ, որ Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը և մյուս մեծ երկրները միայն խոստումներ էին տալիս, որ նրանց պետական գանձարաններից մի ցենտ անգամ չծախսվեց Հայաստանի վրա: Այն դե-յուրե այդպես էլ չճանաչվեց: Եվ Դենիկինի բանակի՝ բոլշևիկներից պարտություն կրելուց հետո էր միայն, 1920 թ. հունվարին, որ դաշնակիցները անդրկովկասյան հանրապետություններին իբրև անկախ պետություններ ճանաչեցին՝ նպատակադրվելով Կովկասը և Պարսկաստանը հետ պահել բոլշևիկյան ազդեցությունից: Այդ ճանաչումը թելադրված չէր ազգերի ինքնորոշման միջազգային սկզբունքից, ինչպես դա կարծում էին և առ այսօր էլ կարծում են որոշ քաղաքագետներ: Քանի որ ռուսական «սպիտակ» բանակները քայքայվել էին, և ո՛չ Մեծ Բրիտանիայի, ո՛չ Ֆրանսիայի, ո՛չ էլ Իտալիայի կառավարությունները չէին կարողանում և չէին էլ ցանկանում որևէ զորք տրամադրել Կովկասին, պետք էր, որ զենքի, զինամթերքի և ուտեստեղենի օգնություն տրվեր այդ հանրապետություններին, որպեսզի ընդդիմանային բոլշևիկներին: Պետք էր, որ նրանք պաշտպանեին Կովկասը և մասնավորապես «պահակագորեին» Բաքուն: Այդ ժամանակ Հայաստանում իշխող տրամադրությունների մասին շատ պատկերավոր մեջբերում է անում Ռ. Հովհաննիսյանը՝ վկայակոչելով Ա. Գյուլխանդանյանի ելույթը Կառավարական տանը, կապված Հայաստանի դե-ֆակտո ճանաչման շուրջ առաջացած ոգևորության հետ: ՆԳ նախարարը իր ելույթում ասում էր, որ Հայաստանը նման է մի հսկայի, որի սիրտը Երևանում է, ձեռքերը՝ Ալեքսանդրապոլում, գլուխը՝ Ղարաբաղում, իսկ ոտքերը Դիարբեքիրում և Սև ծովում: Եվ այժմ ահա հսկան արթնանում է դարերի քնից և զարմանում, որ դեռ ինքը ողջ է: Բայց մենք գիտենք, որ սիրտը երբեք չի դադարել բաբախելուց, շարունակել է իր ասելիքը Ա. Գլուլխանդանյանը, ասելով, որ այսօր Դաշնակիցները իրականացրել են այդ երազանքը, և մենք համոզված ենք, որ շուտով տիտանը կշարժի իր գլուխը, ոտքերը կուղղի, և այդ ժամանակ նորից կհավաքվենք ու կնշենք Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանի ճանաչումը[17]: Քաղաքական-ռազմական կառավարող շրջանները չէին ցանկանում այդ տարիներին, հատկապես 1920 թ. սահմանագծում նկատել այն, ինչն արդեն տեսանելի էր, հույսեր էին փայփայում, որ դաշնակիցները կկերպարանափոխվեն և հանուն Անտանտի իրենց կրտսեր եղբայրակցի, պատերազմում ծանր կորուստներ ունեցած Հայաստանի ու հայ ժողովրդի սրընթաց և կտրուկ, արդյունավետ քայլեր կձեռնարկեն, հողմացրիվ կանեն Կարմիր-բոլշևիկյան ցնցոտիավոր բանակները: Աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությունները և դաշնակիցների վերաբերմունքի էական փոփոխությունը Հայաստանի նկատմամբ դիպուկ նկատել են վերը հիշված Դ. Մ. Լանգը և Ք. Ջ. Ուոքրը. «1920-ի ընթացքում աշխարհի իրավիճակը այնպիսի դրամատիկ փոփոխություններ կրեց, որ այլևս իմաստազրկվեցին դաշնակից տերությունների Հայաստանին տված խոստումները... բուռն վիճաբանություններից հետո... դաշնակցական կառավարությունը որոշեց խաղաղ կերպով իշխանությունը հանձնել բոլշևիկներին և ինչպես առածն է ասում՝ նրանք գերադասեցին «կարմիր լինել, քան մեռած»[18]:

Եվ դեռ ավելին, հայտնի հայ հետախույզ Տ. Դեվոյանցը իր «Կեանքիս դրուագներից» հուշաշարքում վերլուծության ենթարկելով իր ծեռքի տակ գտնվող այդ դժվարին ու հերոսական տարիների բարդ աշխարհաքաղաքական իրադարձություններին վերաբերող հետախուզական մի շարք տեղեկագրեր և այլևայլ վավերագրեր, նույնիսկ պնդում է, որ *«Հայաստանի պատերազմական նախարարութիւնը եւ Փարիզի Հայաստանի պատուիրակութիւնը դեռ 1920 թ. ապրիլին գիտէին տաճիկ-մեծամասնական յարձակումների մասին*... Հայաստանի հետախուզական բաժանմունքի ստացած գաղտնի զեկուցումների մէջ շատ անգամներ շեշտւում էր, որ Տաճկաստանի ազգային ուժերը Մուստաֆա Քէմալ փաշայի ղեկավարութեամբ շտապ վերակազմւում, կազմակերպւում են:

...Եւ այժմ մենք հայերս, մնացել ենք մեն մենակ Դաշնակիցների թշնամիներով շրջապատուած, որոնք սպառնում են փոքրիկ Հայաստանի վերջին ծուխը մարել: *Օգնութիւն ենք խնդրում Ֆրանսիայից, Անգլիայից, Ամերիկայից - բոլորն էլ խուլ են ծեւանում եւ իրար վրայ են նետում մեր գործը: Ապերախտ աշխարհ. մէկ տարի առաջ նրանք մեզ պէտք ունէին, քաջալերում էին մեր դիմադրութիւնը Բաքուի տակ, իսկ այժմ... Ի հաշիւ Հայաստանի Ազրբէյջանը շարունակում էր ամէն միջոցներով միշտ իր սահմանները ընդարձակել, գրաւել զուտ հայաբնակ հողամասերը եւ այդ իր քայլերը ոչ միայն չէին կասեցւում մեր երեկուայ Դաշնակիցների կողմից, այլ երբեմն խրախուսւում էին, որովհետեւ իրենց համար ձեռնտու էր տկարացնել Ռուսաստանը, ուժեղացնելով Ազրբէյջանը»[19]:*

Հետախուզությունը անում էր հնարավորին ամեն ինչ, ինչի որ նա ի վիճակի էր, ձգտելով հայթայթել նորանոր արժեքավոր և Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության տեսանկյունից կարևոր տեղեկույթ, գործելով չափազանց լարված աշխարհաքաղաքական իրավիճակում, դեմ առ դեմ անհամեմատ ավելի հզոր հետախուզական կարողություններ ունեցող Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Թուրքիայի և այլ երկրների, որոնք իրենց հատուկ ծառայություններն ունեին տարածաշրջանում, իսկ մի քանիսն էլ իրենց պաշտոնական ռազմաքաղաքական ներկայացուցչությունները Անդրկովկասի կարևորագույն քաղաքներում՝ Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում, Երևանում և այլուր: Այդուհանդերձ, ի պատիվ հայ հետախույզների, պետք է ասել, որ նրանք երբեք էլ չերկնչեցին ու շարունակեցին իրենց պայքարը՝ մինչև Առաջին հանրապետության անկումը:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես՝ Իրազեկ Յ., Սօտիկ անցյալից: Պատմական դէպքեր, ապրումներ, 1917-1922, Պէյրութ, տպ. Համազգայինի, 1956, էջ 67:
2. Տես՝ Սասունի Կ., Հայ-թուրքական պատերազմը (1920-ին), Պէյրութ, 1969, էջ 21:
3. Վահե Արծրունի, Հայ-տաճկական պատերազմը, Հայ սպայութիւնը, Շատախ, Երեւան, «Մուղնի» հրատ., 2002, էջ 165:
4. Նույն տեղում, էջ 73-74:
5. Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պեյրութ, 1968, էջ 254:
6. Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. Պ-200, g. 1, գ. 155, թ. 10:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում, ֆ. Պ-199, g. 1, գ. 73 (71), թ. 187-188:
10. Նույն տեղում, ֆ. Պ-200, g. 1, գ. 271, թ. 85-86:
11. Նույն տեղում, ֆ. Պ-204, g. 1, գ. 133, թ. 26-27, ֆ. Պ-200, g. 1, գ. 271, թ. 86:
12. Տիգրան Դէոյեանց, Կեանքիս դրուագներից, Հայրենիք (Բոստոն), 1946, N 2 (253), մարտ-ապրիլ, էջ 105:
13. ՀԱԱ, ֆ. Պ-200, g. 1, գ. 33, թ. 32:
14. Նույն տեղում, թ. 40-42:
15. Տես՝ Յովհ. Քաջազնունի., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, Վիեննա, Մխիթարեան տպ., 1923, էջ 43:
16. Տես՝ Դեյվիդ Մարշալ Լանգ, Քրիստոֆեր Ջեյմս Ուոքր, Հայերը (Հայ ժողովրդի պատմություն), խմբ. Կ. Մ. Խուդավերդյանի, Ե.,Հայկ. հանր. գլխ. խմբ.,1992, էջ 31:
17. Տես՝ «Յառաջ», 28, N 1-2, 29, N2. 1920, Դարբինեան Ռուբէն, Հայաստանի Հանրապետութեան օրերէն, «Հայրենիք» (Բոստոն), 28, 1950, հունիս, էջ 24-25, Hovannissian R. G., The republic of Armenia, vol. II, p. 513:
18. Տես՝ Դեյվիդ Մարշալ Լանգ, Քրիստոֆեր Ջեյմս Ուոքր, նշվ. աշխ., էջ 32:
19. Տիգրան Դէոյեանց, Կեանքիս դրուագներից, 1947, N 2 (259), մարտ-ապրիլ, էջ 107: